

## ԽԱՉԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ



### ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ ԱՄՆ-ում

Իրավական ռեալիզմի (legal realism) հայեցակարգը արմատական վերափոխում մտցրեց ամերիկյան իրավունքի տեսության և պրակտիկայի մեջ:

Իրավաբանական ռեալիզմի հայեցակարգը ձևավորվել է ԱՄՆ-ում 20-րդ դարում՝ սոցիոլոգիական իրավագիտության ազդեցության ներքո: Ընդհանուր առմամբ իրավաբանական ռեալիզմն իրենից ներկայացնում է իրավունքի ռաուսմասիթյան սոցիոլոգիական և հոգեբանական սկզբունքների վրա հիմնված հատուկ դոկտրին, որը հակադրվում է իրավաբանական պոզիտիվիզմին, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ պոզիտիվիզմի կողմնակիցները դատական գործընթացը դիտարկում են լոկ որպես կոնկրետ գործի հանգամանքները վերացական նորմերով որակելու տրամաբանական միջոցառում: Մինչդեռ ռեալիստները հիմնավորում են, որ դատական գործունեությունն ունի առավել բարդ բնույթ, քան ներկայացնում էին ձևական-դոգմատիկ իրավագիտության հետևորդները:

Ինչի՞ հանգեց ամերիկյան իրավագիտությունը 1920-ական թվականների վերջին, երբ ասպարեզ իջավ բավականին արմատական տրամադրված երիտասարդ գիտնականների մի ամբողջ աստղաբույլ, ովքեր պայամանականորեն միավորվում են իրավական ռեալիզմի շարժման մեջ (legal realism movement): Փորձենք ամփոփել այս բանավեճը և ձևակերպել այն հիմնական թեզիսները, որոնք առաջադրվել էին իրավական ռեալիստների շարժման կայացման ժամանակ:

Առաջին՝ իրավունքի և իրավաստեղծման՝ որպես հասարակական կոնկրետ տնտեսական և էթիկական նպատակների ձեռքբերման միջոցի գործիքային, պրագմատիկ ըմբռնումը տարբեր շահերի և արժեքների հավասարակշռման միջոցով, ոչ թե որպես ինքնավար համակարգի, որը գոյություն ունի իր մեջ և իր համար:

Երկրորդ՝ պոզիտիվ իրավունքի դիմամիկայի և հասարակական-սոցիալական, տնտեսական

կամ մշակութային համատեքստում փոփոխություններից նրա կախվածության գիտակցում:

Երրորդ՝ գոնե խնդրահարույց գոտիներում դատական իրավաստեղծման անխուսափելիության ճանաչումը և դեկլարատիվ տեսության՝ որպես երեսպաշտ ֆիկցիայի տապալումը:

Չորրորդ՝ ինչպես պոզիտիվ իրավունքում, այնպես էլ օրենքի մեկնաբանման և նախադեպերի կիրառման դեպքում դատարանի կողմից որոշման կայացման ժամանակ քաղաքական-իրավական արժեքներից ու պատկերացումներից լիակատար տարանջատման անհնարինության մասին գաղափարը: Վեճերի լուծման ժամանակ պարզ ֆորմալ տրամաբանության և դոկտրինաների ու հասկացությունների միջոցով ձևավորված իրավական արատրակտ կոնցեպցիաների հետ մանիպուլյացիաների կիրառմանը դատական գործառույթի հանգման անհնարինությունը:

Հինգերորդ՝ stare decisis սկզբունքի օգտակարության ճանաչումը, բայց դատարանի կողմից նախադեպից նահանջելու իրավունքի թույլ տալը այն դեպքում, երբ խոսքը նույն կամ ավելի բարձր ատյանի դատարանի մասին է, քան այն, որը նախադեպը ստեղծել է և երբ իրավունքի քաղաքականության պատկերացումները պահանջում են իրավունքի զարգացում:

Վեցերորդ՝ որոշակի անորոշ վերաբերմունք օրենքների մեկնաբանման հարցերի նկատմամբ, որը այնուամենայնիվ, ավելի ֆորմալ կլիներ, քան Եվրոպայում ազատ իրավունքի շարժման կողմնակիցների մոտ:

Այս հիմնական գաղափարներն աստիճանաբար դարձել են ավելի ու ավելի տարածված, և նրանց հիման վրա 1920-ական թվականներին առաջացավ իրավական ռեալիզմի շարժումը, որի ներկայացուցիչները փորձում էին ավելի ստույգ պարզել, թե իրականում ինչ է կատարվում դատարաններում, ինչպիսին են դատական իրավաստեղծման «հաղորդափոկերը» և օրենքների մեկնաբանման մեթոդները:

Իրավական ռեալիզմի հայեցակարգը առավել լիարժեքորեն էր ներկայացված է Յեյի և Կոլումբիայի համալսարանների իրավական դպրոցներում, պայթեցրեց ամերիկյան գիտական վերնախավը և շարունակեց խռովել գիտնականների մտքերը 1920-ական թվականների վերջից մինչև 1940-ական թվականները: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո շարժումը հեռացավ գիտական բեմահարթակից ճիշտ այնպես, ինչպես Առաջին համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայում մարեց «Հանուն ազատ իրավունքի» շարժումը, բայց մինչ այսօր իրավական ռեալիզմի ժառանգությունը գիտական թե՛ վեճերի առարկա է ամերիկյան գիտնականների շրջանում:

Իրավական ռեալիզմի շարժման ուշադրության կենտրոնում դատական իրավաստեղծման հարցերի ուսումնասիրությունն էր: Ուստի, մեր վերլուծության համար այդ ուղղության կողմնակիցների հայացքների ուսումնասիրությունը չափազանց հետաքրքիր է:

Նոր շարժման սկզբի համար հաճախ մեկնակետ են ընդունում Կոլումբիայի համալսարանի Իրավունքի դպրոցի դասախոս, Ամերիկայի իրավունքի դպրոցների ասոցիացիայի նախագահ Հերման Օլիֆանտի (Herman Oliphant) ելույթը այդ ասոցիացիայի տարեկան համագումարում 1927 թ.: Այդ ժամանակ Օլիֆանտը գիտնականներին կոչ արեց քանդել ֆորմալիզմի պատմեղները և սկսել իրավունքին նայել ռեալիստորեն, ուսումնասիրել ոչ թե դատական որոշումների տեքստերը, այլ այն, թե ինչպես և ինչու են այդ որոշումներն ընդունվում, ամբողջովին չհիմնվել ֆորմալ տրամաբանության վրա իր ինդուկցիաներով, դեդուկցիաներով ու անալոգներով, այլ փորձել գտնել իրավունքի քաղաքականության փաստարկները, որոնք կանգնած են տրամաբանական այդ բոլոր մանիպուլյացիաների հետևում: Բոլոր հիմնական հոդվածներն ու գրքերը, որոնք հետագայում համախմբվեցին իրավական ռեալիզմի շարժում «բրենդի» տակ, լույս են տեսել 1927 թվականից հետո<sup>2</sup>:

ԱՄՆ-ում իրավական ռեալիզմի շարժման հիմնական կազմակերպիչը երիտասարդ գիտնական Կարլ Լևելլինն էր՝ ամերիկացի նշանավոր իրավագետը, ով պայմանագրային իրավունքի ոլորտում առաջատար մասնագետներից էր և ԱՄՆ-ի Միատեսակ առևտրային օրենսգրքի (այսուհետ՝ ՄԱՕ) գլխավոր հեղինակներից մեկը: Շարժման երկրորդ, առավել արմատական տրամադրված առաջնորդը իրավաբան Ջերոմ Ֆրենկլն էր, ով հետագայում դարձավ հայտնի դատավոր: Բացի նրանցից ու արդեն նշված Օլիֆանտից՝

շարժման զարգացման գործում նշանակալի դեր են խաղացել այնպիսի հայտնի գիտնականներ, դատավորներ ու իրավաբաններ, ինչպիսիք են Մարս Բ-ադինը (Radin)<sup>3</sup>, դատավոր Հատչեսոնը (Hutcheson)<sup>4</sup>, Ֆելիքս Կոենը (Cohen), Ուոլտեր Ուիլեր Քուկը (Cook)<sup>5</sup>, Հեսել Ինտեման (Yntema), Լեոն Գրինը (Green), Անդերհիլ Մուրը (Moore)<sup>6</sup>, Ֆրեդ Ռոդելը (Rodell)<sup>7</sup>, Թուրման Արնոլդը (Arnold)<sup>8</sup> և մի խումբ այլ իրավագետներ, ովքեր այն ժամանակվա ամերիկյան իրավական գիտության մեջ իսկական ապստամբություն բարձրացրին ֆորմալիզմի դեմ: Հրատարակվեցին տասնյակ հոդվածներ, լույս տեսան գրքեր, անցկացվեցին գիտաժողովներ՝ այն ամենը, ինչը ցանկացած երկրում զարգացած գիտական կյանքի նշանների հետ ասոցացվում է այնպիսի հասկացության հետ, ինչպիսին է «գիտական շարժումը», և ինչը, ցավոք, այնքան հեռու է մեր՝ հագիվ շնչող իրավական կյանքի իրողություններից:

Այդ գիտնականների հայացքները շատ բանով տարբերվում էին, ինչը թույլ չի տալիս խոսել իրավական միասնական դպրոցի մասին: Բացի այդ՝ նրանց գիտական ջանքերի գործադրման ոլորտը առավելագույնս բազմազան էր՝ դատական իրավաստեղծման տեսության բուն հարցերից մինչև պայմանագրային կամ կորպորատիվ իրավունքի կոնկրետ հարցերը: Բայց նրանց համար ընդհանուր հակաֆորմալիստական տրամադրությունը և մի շարք հիմնարար մոտեցումները թույլ են տալիս նրանց ակտիվ գործունեությունը որակել որպես լիարժեք գիտական շարժում:

Իրավաբանական ռեալիզմի հիմնադիրներից է քաղաքացիական իրավունքի ամերիկյան մասնագետ Կարլ Լսելին (1893-1962), ում կարծիքով դատական որոշումների ձևական-տրամաբանական վերլուծությունն օգտակար է, սակայն դրանց օգտակարությունն էականորեն կաճի, եթե այդ որոշումները մանրակրկիտ կերպով ուսումնասիրվեն նաև պրագմատիկ և սոցիալ-հոգեբանական բովանդակության տեսանկյունից: Ռեալիստների կարծիքով, իրավական ակտերի ձևական-դոգմատիկ մեթոդները չեն համապատասխանում ժամանակակից գիտության պահանջներին, քանի որ գործող իրավունքն ստեղծվում է ոչ թե օրենսդրի կողմից վերացական նորմեր ընդունելու եղանակով, այլ դատական և վարչական մարմինների կողմից կոնկրետ վեճեր լուծելու ընթացքում: Կ. Լևելլիի հայտնի արտահայտության համաձայն՝ իրավունքը այն է, ինչ դատավորները որոշում են վեճի վերաբերյալ: Ռեալիստներն իրավունք են դիտում այն, ինչ ստեղծվում է դատավորի կողմից կոնկրետ

գործի քննության ընթացքում:

1920-ական թվականների վերջին Ռոսկո Փաունդը, ով արդեն Հարվարդի Իրավունքի դպրոցի հեղինակավոր դեկանն էր, աստիճանաբար թողնում էր իր երիտասարդ տարիների ռեֆորմիստական պոռթկումների և մեխանիկական արդարադատության դեմ պայքարը: Ու չնայած նրա շատ գաղափարներ վերցրին ռեալիստները, բայց նա չդարձավ իրավական ռեալիզմի շարժման առաջնորդը: Ռեալիստները, ինչպիսիք են Լլևելլինը և Կոենը, ուղիղ հայտնում էին իրենց երախտագիտությունը իրավունքի ֆունկցիոնալ և գործիքային բնույթի բացահայտման և ԱՄՆ-ում Յերինգի «տնավորման» համար, բայց նաև հեռու գնացին: Ինչպես երբեմն նշվում է գրականության մեջ, չնայած Փաունդը դե ֆակտո հանդիսանում է իրավական ռեալիզմի «հոգևոր հայրը», այդ ուղղության ներկայացուցիչներին ընդունում էր որպես «անառակ որդիներ»<sup>10</sup>: Չարմանալի չէ, որ առավել սուր բանավեճերից մեկը ռեալիստների մոտ բռնկեց ոչ թե ուղղակի ընդդիմախոսների, այլ ֆորմալիստների հետ: Վերջիններիս արդեն մի լավ «թափ» էր տվել քննադատների նախկին սերունդը՝ Հոլմսը, Փաունդը և Կարոլոզն: Ինչպես միշտ է լինում, ամենադաժան մարտերը տեղի են ունենում մոտ ուղղությունների միջև, որոնք փորձում են պաշտպանել իրենց գրոհի անկյունը՝ որպես միակ ճշմարիտը: Ուստի Փաունդի վարկածով՝ հենց «հակաֆորմալիզմի» ակադեմիական առումով ստուգված, չափավոր և «սանրված» տարբերակը դարձավ այն տեսությունը, որից բաժանումը կենսականորեն կարևոր դարձավ ռեալիստների հետազոտական ինքնուրույն ծրագրի ձևավորման համար:

Նախ և առաջ խոսքը Փաունդի և Լլևելլինի հայտնի բանավեճի մասին է: Այդ հայտնի «փոխադարձ հարվածների» պատմությունը հետևյալն է. 1930 թ. Լլևելլինը աղմկահարույց մի հոդված գրեց ռեալիստների շարժման մասին<sup>11</sup>, որտեղ քննադատում էր ֆորմալիզմը պոզիտիվ նորմերի նշանակությունը չափազանցելու և դատական հայեցողության խնդիրները անտեսելու համար՝ փորձելով ձևակերպել նոր շարժման էությունը: Նույն տարում լույս տեսավ Լլևելլինի ընկերոջ՝ Ջերոմ Ֆրենկի առավել ռադիկալ գիրքը, որտեղ վերջինս փորձեց ընդհանրապես հետո կոչել պոզիտիվ նորմերի ցանկացած իմաստ և իրավունքի ողջ կյանքը հանգեցնել դատական ազատ հայեցողության իրացմանը<sup>12</sup>: 1931 թվականին Փաունդը ռեալիստների նոր առաջացող շարժմանը նվիրված իր հոդվածում փորձեց խելքի բերել «երիտասարդներին» և վերադարձնել առավել չափավոր տիրույթ՝ փորձելով

նրանց հրամցնել իր հետազոտական ծրագիրը: Նա ռեալիստներին մեղմորեն մեղադրեց որոշակի աստիճանի ռադիկալիզմի, ավելորդ նիհիլիզմի, դատավարության դեակրիպտիվ վերլուծության դերի գերազանահատման ու իրավունքի արդյունավետ զարգացման նկատմամբ հետաքրքրության բացակայության մեջ՝ նրանց առաջարկելով առավել հավասարակշռված հետազոտական ծրագիր, որը պատշաճ դեր էր վերապահում իրավունքի քաղաքականության վերլուծությանը և առաջարկում նրա բարեփոխման ճանապարհներ<sup>13</sup>: Լլևելլինն անմիջապես պատասխանեց հոդվածին, որում կտրուկ կերպով կատեգորեց Փաունդի փորձը՝ հանդես գալու որպես նոր շարժման «գուրու» և նրա հետ բանավեճում վերջնականապես դե ֆակտո ձևավորեց այդ ուղղության կերպարը՝ այն վերջնականապես ազատագրելով Փաունդի «սոցիոլոգիական յուրիսպրոդենցիայից»<sup>14</sup>: Նույն հոդվածում Լլևելլինը կազմել էր այն գիտնականների ցանկը, որոնց գիտական աշխատությունները, նրա կարծիքով, թույլ էին տալիս նրանց դասել նոր շարժման շարքերը: Փաունդն այդ ցուցակում չկար:

Բացի Լլևելլինի հետ անձնական թյուրըմբռումից՝ 1930-1931 թվականներին Փաունդից ռեալիստների բաժանման պատճառ էր նաև այն, որ 1920-ական թվականների վերջին Փաունդը կողմնակից էր իրավունքի քաղաքականությանն ավելի մեծ շեշտադրմանը և իրավաստեղծման ժամանակ շահերի հավասարակշռմանը: Ընդամին դատական իրավաստեղծման ազատությունը Փաունդի աշխատություններում որոշակի սահմաններում ընդունվում էր, բայց չէր առանձնացվում որպես նրա գիտական հետազոտությունների կենտրոնական թեմա: Այլ կերպ ասած, ինչպես ճշմարտացիորեն նշվում է գրականության մեջ, Փաունդն ավելի ու ավելի էր մերձեցնում Գերմանիայի իրավագիտության շահերի կողմնակիցների հետ (նախ և առաջ Հեկի հետ)<sup>15</sup>: Իսկ ռեալիստները փորձեցին ներկայացնել ծրագիր, որտեղ իրավունքի քաղաքականության հարցերը մղված էին երկրորդ պլան, իսկ կենտրոնական թեմա էր դատավարության իրողությունների վերլուծությունը և դատական հայեցողության ազատության ֆենոմենը: Այլ կերպ ասած, ռեալիստները փորձեցին ամերիկյան իրավագետ հասարակության համար տալ այն համերգը, որը Գերմանիայում կատարում էր հանուն ազատ իրավունքի շարժման «նվազախումբը» և հատկապես նրա արմատական թևը XX դարասկզբին:

Ռեալիստները փորձում էին գործընկերների աչքերը բացել և ցույց տալ, թե ինչ է իրականում

կատարվում իրավունքի ոլորտում, և իրավունքը մաքրել կեղծավորությունից և երևութականությունից, ինչպես դեկլարատիվ տեսության դեպքում էր: Իսկ Փաուլոնի գաղափարն ուղղված էր ոչ թե դեակրիպտիվ, այլ նորմատիվային, քաղաքական-իրավական վերլուծության ոլորտին, իրավական օպտիմալ նորմերի ընտրության նկատմամբ գիտական մոտեցումների փնտրություն: Բացի այդ՝ Փաուլոնը չէր կարող ընդունել Լլևելլինի և հատկապես Ֆրենկի ծայրահեղ նիհիլիստական հայացքները պոզիտիվ իրավունքի դերի նկատմամբ: Ուստի, այն փաստը, որ Լլևելլինը Փաուլոնին չճանաչեց որպես նոր շարժման առաջնորդ, մեծ հաշվով միանգամայն բացատրելի էր:

Փորձենք հակիրճ ներկայացնել Լլևելլինի հիմնական գաղափարները.

1. 1930 թ. լույս տեսած իր ամենահայտնի գրքերից մեկում Լլևելլինը հայտեց ողջ շարժման համար առանցքային դարձած այն թեզիսը, որ իրավունքն իրենից ներկայացնում է այն, թե դատավորներն ու պետական այլ պաշտոնյաներ ինչպես են իրենց պահում վեճերի նկատմամբ<sup>16</sup>: Ըստ էության՝ այդ դատավարական իրավահասկացության մեջ Լլևելլինը հետևում էր Գրեյի՝ իրավունքի ցանկացած աղբյուրի ոչ պարտադիր լինելու ու իրավունքի՝ որպես դատական որոշումների ընկալման մասին, նաև Հոլմսի կանխագուշակման տեսության գաղափարներին: Հոլմսի կանխագուշակման տեսությունից տարբերվում էր նրանով, որ ըստ Լլևելլինի՝ ոչ թե դատական որոշումների կանձագուշակումը, այլ հենց դատական որոշումներն են կազմում իրավունքի էությունը<sup>17</sup>: Բայց այս տարբերությունն անէական է: Լլևելլինի մոտեցման դեպքում սուբյեկտիվ իրավունքների մասին խոսակցություններն իրականում ընդամենը նշանակում են այդ իրավունքների ոտնահարման նկատմամբ դատարանների որոշակի վարքի կանխագուշակում<sup>18</sup>: Իհարկե, այստեղ գործ ունենք իրավունքի ռեդուկցիոնիստական սահմանման հերթական փորձի հետ: Եթե վերլուծական իրավագիտությունը իրավունքը սահմանում էր որպես պոզիտիվ նորմերի ամբողջություն, ապա այնպիսի ռեալիստներ, ինչպիսիք են Լլևելլինը, իրավունքի՝ իրականում բարդագույն ու բազմատարր ֆենոմենը հանգեցրին դատավարական պրոցեսի:

2. Պարզեցման ձգտումն, անշուշտ, հասկանալի է և համապատասխանում է մարդկային բնույթին, բայց գիտության մեջ ամենագովելի քայլը չէ: Իրավունքի նման սահմանման ողջ սահմանափակությունը, ըստ երևույթին, ակնհայտ դարձավ նաև հենց Լլևելլինի համար: Համենայն դեպս հետագա-

յում նա ընդունեց իրավունքի սեփական սահմանման անհաջող լինելը և 1951 թ. գրքի վերահրատարակման ժամանակ պարզաբանեց, որ այն արտացոլում էր ճշմարտության մի մասը, քանի որ իրավունքի կարևորագույն խնդիրներից է վերահսկել և ուղղորդել պաշտոնյաների ու դատավորների աշխատանքը: Ուստի, նա ընդունեց, որ իրավունքի՝ որպես դատավորների ու պաշտոնյաների փաստացի վարքի սահմանումը այնքան էլ չի համատեղվում իրավունքի՝ որպես սոցիալական իրողությունների վրա ազդեցության գործիքի հասկացության հետ<sup>19</sup>: Բայց այդ ճշգրտումն արվեց այն ժամանակ, երբ շարժումն արդեն մարել էր: Իսկ 1930-ական թվականներին շատ ռեալիստներ լրջորեն հավատացել էին իրավունքի նման ընթացակարգային հասկացությանը և դրանով իսկ իրենց ուսմունքը դարձրել բավականին խոցելի: Միևնույն ժամանակ իրավունքի վատ տեսությունները չափազանց կարևոր են այն չափով, որ չափով օգնում են ավելի լավ հասկանալու այս կամ այն ֆենոմենի բնույթը: Այդ շարժմանը բնորոշ իրավունքի՝ որպես վեճերի քննման իրողությունների սոցիոլոգիական հասկացության, ոչ թե նորմատիվ, որին դատարանները պետք է ենթարկվեն, խաղաց հենց նման դեր: Այս չափազանցության օգնությամբ ռեալիստները ուշադրություն հրավիրեցին նրան, թե դատարաններն իրականում ինչպես են քննում վեճերը, իսկ դատավարության «խորհրդի» բացումը ամերիկացիներին օգնեց հետագայում ձևավորելու իրավունքի առավել ռեալիստական ու բարդ ընկալումը:

3. Գրեյից հետո Լլևելլինը գրում էր, որ այս կամ այն ֆորմալ աղբյուրից բխող նորմերը իրականում բացարձակ պարտադիր չեն և դատարաններին չեն զրկում հայեցողության ազատությունից: Իրեն բնորոշ աֆորիզմների ոճով նա գրում էր, որ միայն պոզիտիվ նորմերը և ուրիշ ոչինչ չսովորած ուսանողը բացել է միայն կեղևը՝ առանց դիպչելու բովանդակությանը<sup>20</sup>: Իրավաբանի խնդիրն է հասկանալ, թե որքան ռեալիստորեն են լուծվում վեճերը, քանի որ հենց այդ օրինաչափությունները և ոչ ամենևին պոզիտիվ նորմերն են իրավունքը: Դատավարության իրողությունների ուսումնասիրման ժամանակ հարկ է ուշադրություն դարձնել ոչ այնքան այն բանի վրա, թե դատավորներն ինչպես են պատճառաբանում իրենց որոշումները, այլ այն բանի վրա, թե այդ բառերն իրականում որքանով են համապատասխանում նրա հետ, թե իրականում ինչ են անում: Պոզիտիվ նորմերի դերն այն է, որ դրանք օգնում են ավելի ճշգրիտ կանխագուշակել, թե դատարանն ինչպես կլուծի վեճը, և ոչ թե այն, որ երաշխավորում են հենց այդ արդյունքը<sup>21</sup>: Լլևելլինը

տխրում էր, որ շատ իրավաբաններ սխալմամբ հավատում են պոզիտիվ նորմերի պարտադիր բնույթին և միմյանց մոլորեցնում են: Եթե իրականում պոզիտիվ նորմերը պատասխանեին բոլոր հարցերին, ապա վեճեր ընդհանրապես չէին լինի, քանի որ մինչև դատավարությունը կողմերը կարող էին վստահ լինել, թե դատարանը որ դիրքորոշումը կապաշտպանի<sup>22</sup>:

4. Բայց ինչո՞ւ իրավական նորմերը չեն կարող լինել իրավունք և դե ֆակտո պարտադիր չեն դատարանների համար: Պարզապես այդպիսին են կյանքի իրողությունները: Լլևելլինը գրում էր, որ գործնականում դատավորն ազատ է հրաժարվել նախադեպից կամ իր գործն առանձնացնելով նախադեպի ratio decedendi-ից այս կամ այն փաստացի մանրամասների տարբերության պատճառով, կամ ուղղակիորեն չեղյալ հայտարարելով այն նաև այլ հնարքների միջոցով: Ինչպես գրում էր Լլևելլինը, չկա այնպիսի նախադեպ, որը մեծ ցանկության դեպքում դատարանը չկարողանա անտեսել<sup>23</sup>: Այն, ինչը դատավորներին հաճախ խանգարում է չեղյալ հայտարարել նախադեպերը, պարզապես դատական իշխանության հեղինակության նկատմամբ հավատը չկործանելու և իրավական համակարգը առանց անհրաժեշտության ապակայունացնելու ցանկությունն է: Իսկ իրականում ակնհայտորեն հնացած ու անհաջող նախադեպից խուսափելու ցանկության դեպքում դատարաններն ունեն նման քայլն արդարացնելու օրինական գործիքների մի ամբողջ զինանոց: Ուստի, նախադեպերը և stare decisis սկզբունքը բացարձակ չեն: Նախադեպերը կարող են օգնել կանխագուշակելու վեճերի արդյունքը հավանականության մեծ աստիճանով, բայց ոչ ամբողջովին կանխորոշել այն<sup>24</sup>:

5. Լլևելլինի դիրքորոշման համաձայն օրենսդիր նորմերը նույնպես բացարձակ չեն: Օրենքների նորմերը վատ են մտածված, ունեն չափազանց ընդհանուր բնույթ և հաճախ չունեն միանշանակ իմաստ:

Մեկնաբանման տարբեր ձևերը հակասում են միմյանց և չունեն հստակ հիերարխիա, իսկ դա դատավորներին թողնում է իրավաստեղծման զգալի բաց տարածք<sup>25</sup>: Օրենքների մեկնաբանման հարցերի մասին իր հայտնի դարձած հոդվածում Լլևելլինը կազմաբանդեց օրթոդոքս այն պատկերացումը, որ մեկնաբանման մեթոդների ճիշտ կիրառման դեպքում օրենսդիր նորմերը տալիս են միանշանակ պատասխաններ<sup>26</sup>: Այդ հետազոտության մեջ Լլևելլինը ցույց տվեց, որ մեկնաբանման բոլոր գոյություն ունեցող սկզբունքները (canons of interpretation) իրականում հակասում են միմյանց և չեն են-

թարկվում հստակ աստիճանակարգի: Հետևաբար, մեկնաբանման տարբեր մեթոդների ու սկզբունքների կիրառումը կարող է օրենքի միևնույն նորմից դուրս բերել տարբեր իմաստներ: Գոյություն չունի մեկնաբանման միակ ճշմարիտ տարբերակ, և ամեն ինչ, վերջին հաշվով, կախված է դատավորի հայեցողությունից, ով կարող է ընտրել մեկնաբանման այս կամ այն տարբերակը և ստանալ այս կամ այն արդյունքը: Այսպես, օրինակ, դատավորը կարող է կիրառել մեկնաբանման հին սկզբունքը, որի համաձայն նա պետք է օրենքի նորմին տա բառացի իմաստ, եթե դրա տեքստը անհսկանալի և ակնհայտ է: Բայց նա նաև իրավունք ունի կիրառելու ոչ պակաս հին «անհեթեթության սկզբունքը», ըստ որի օրենքի նորմի թեկուզ միանգամայն ակնհայտ բառացի իմաստը չի կիրառվում, եթե հանգեցնում է հստակորեն անհեթեթ կամ վնասարար արդյունքի<sup>27</sup>: Կամ, օրինակ, օրենքների մեկնաբանման անգլոսաքսոնական ավանդույթում գոյություն ունի նույն օրենքի միանման տերմիններին միասնական իմաստ տալու սկզբունք, ինչպես նաև իրավահավասարության սկզբունք, որի համաձայն դատարանն իրավունք ունի նույն օրենքի միանման տերմիններին տալ տարբեր իմաստ, եթե դա նրա ըմբռնումը դարձնում է ավելի համաձայնեցված: Մեկ այլ օրինակ՝ մեկնաբանման այն սկզբունքին, ըստ որի «մեկի արտահայտումը բացառում է մյուսը» (մեկնաբանում acontrario), հակասում է այն սկզբունքը, որը թույլ է տալիս հակառակ մոտեցումը, եթե ակնհայտ է, որ «մեկի արտահայտումը» միայն օրինակ է ներկայացնում: Մեկ ուրիշ օրինակ՝ արմատացած մի սկզբունքի համաձայն՝ որևէ ցանկ ավարտող հստակեցնող խոսքը վերաբերում է միայն ցանկի վերջին տարրին, իսկ մեկ այլ սկզբունքի համաձայն՝ կարող է վերաբերել ցանկի բոլոր բաղադրիչներին, եթե առողջ բանականությունը դա է պահանջում<sup>28</sup>: Մանրամասն վերլուծելով օրենքների մեկնաբանման առկա դոկտրինան՝ Լլևելլինը տվեց իրավունքի որոշակիության գաղափարի համար ոչ միսթարիչ ախտորոշում: Նրա կարծիքով գլխավոր դեր է խաղում դատարանի սուբյեկտիվ հայեցողությունը. ով ընտրում է մեկնաբանման այս կամ այն սկզբունքը հասնելու համար իրավունքի քաղաքականության (օրինակ, արդարացի) տեսանկյունից առավել խելամիտ արդյունքի, հետո միայն ընտրում մեկնաբանման այլ ֆորմալ մեթոդը, որպեսզի տպավորություն ստեղծվի, որ ինքը մեկնաբանման այլ տարբերակ չի ունեցել: Դրանով իսկ ստեղծում են մեխանիկական իրավաստեղծման պատրանք՝ իրականում իրացնելով իրավաստեղծման լայն լիազորություններ:



6. Լլևելլինի կարծիքով արդյունքում դատավորի համար գոյություն չունի բացարձակ պարտադիր ոչ մի պոզիտիվ իրավունք: Հաշվի առնելով այն, որ Լլևելլինը քննադատում էր նաև դոկտրինալ ֆորմալիզմը նոր իրողությունների հետ հաշտվել չցանկացող խիստ աքսիոմների տեսքով ինդուկտիվ ընդհանրացումների ներկայացման համար<sup>29</sup>, նրա համար այլ ելք չի մնում, քան խոստովանել, որ իրավունքը կողմերի համար այն անհրաժեշտ որոշումն է, որը դատարանը կայացնում է, այլ ոչ թե այն, թե ինչով է նա այդ ժամանակ ղեկավարվում: Նման մոտեցումն սկզբունքորեն տրամաբանական էր, եթե ելակետ ընդունենք այն պատկերացման պահպանումը, որ օրենքն իրենից պետք է ներկայացնի բարցարձակ պարտադիր պահանջներ: Բանի որ բացարձակ պարտադիր են միայն դատական որոշումները, որոնք տարածվում են բացառապես վեճերի կողմերի վրա, իսկ օրենքները, նախադեպերը և դոկտրինաները չեն թելադրում նորմեր բացարձակ ճշգրտությամբ, միանշանակությամբ ու անդրդվելիությամբ և չեն կարող բացառել դատարանի կողմից ստեղծագործ մասնակցությունը, ապա եզրակացությունը, որին եկան Լլևելլինը և Գրեյը, ներկայանում է ոչ առանց իմաստի: Իրավունքի՝ որպես որոշումների կայացման, և ոչ թե բուն որոշումների հիմքի ընկալման պահպանումը հնարավոր է միայն իրավական նորմերի բացարձակ պարտադիրության չափանիշից հրաժարվելու և դեպի նրանց հարաբերական ուժի և պրեզումպտիվ պարտադիրության դոկտրինային անցնելու դեպքում: Բայց Լլևելլինը և շատ այլ ռեալիստներ պատրաստ չէին հրաժարվելու իրավունքի՝ որպես բացարձակ պարտադիրի հատկանիշից, ու այստեղից էլ նրանց այդքան ռադիկալ դատավարական իրավարկակալումը:

7. Միևնույն ժամանակ Լլևելլինը չէր հերքում այն, որ դատարանները երբեմն ընդունում են պոզիտիվ նորմեր գուտ մեխանիկորեն: Նրա խնդիրն էր ցույց տալ, որ իրավունքի այդ տարրի իրական նշանակությունը դե ֆակտո ավելի քիչ է, քան նախկինում ընդունված էր համարել<sup>30</sup>: Համապատասխանաբար, գիտնականները պետք է ուշադրություն դարձնեն այլ տարրի որը, պարզվում է, ավելի նշանակալի է: Ըստ Լլևելլինի՝ այդ տարրը դատարանների և այլ պաշտոնյաների, ինչպես նաև հասարակ քաղաքացիների իրական վարքն է<sup>31</sup>: Ավելի վաղ գերիշխող բառերի շեշտադրման փոխարեն ուշադրությունը պետք է կենտրոնացնել իրական վարքի վրա<sup>32</sup>: Ուշադրության կենտրոնում կանգնում է առանցքային մի հարց՝ իրավաստեղծումն իր էությանը դատավորի հայեցողությունն է:

8. Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հետազոտական այն աշխատանքի ծանրության կենտրոնը, որը Լլևելլինը փորձում էր իրացնել 1920-1940-ական թվականներին, ընկած էր դատավարության ոլորտում: Հարգանքի տուրք մատուցելով Փաունդին նրա «իրավունքը գրքերում» և «իրավունքը գործողության մեջ» բաժանման և ընդհանրապես իրավունքի նկատմամբ ֆունկցիոնալ մոտեցման մշակման գաղափարների համար՝ նա կարծում էր, որ Փաունդը դե ֆակտո անհրաժեշտից ավելի լրջորեն է ընկալում պոզիտիվ նորմերը և չափազանց շատ է տարվել իրավունքի վերջնական նպատակների նկատմամբ սպեկուլյացիաներով: Լլևելլինի կարծիքով պոզիտիվ իրավունքը, ինչպես մենք տեսել ենք, ինքն իրենով բացարձակ պարտադիր չէ, իսկ շահերի հավասարակշռման մասին Փաունդի դատողությունները չեն ուղեկցվում դրանց հավասարակշռման կոնկրետ մեխանիզմների ընտրությամբ<sup>33</sup>: Ուստի, իրավունքի կենտրոնական հարցը այն է, թե ինչ և ինչպես են իրականում դատարաններն անում, որքան ռեալ է աշխատում դատական ապարատը:

9. Բայց Լլևելլինի կարծիքով վերը նշվածը ճանապարհ չի բացում դատական թողությունների համար: Հայեցողության ազատության որոշակի աստիճանը չի նշանակում, որ դատավորը դեպիտո է, ով իրավասու է լուծել վեճերը իր քնահաճույքով: Առավել հաճախ դատավորը կընտրի միայն այն որոշումը, որը կարող է այս կամ այն չափով ամրապնդվել ֆորմալ փաստարկներով: Ֆորմալ փաստարկները (օրինակ, այս կամ այն նախադեպերին հղումները) կարող են ամրացնել տարբեր որոշումներ: Որոշումների այդ տարբերակներով որոշակի չափով սահմանափակվում է դատարանի հայեցողությունը: Եթե բոլոր ֆորմալ փաստարկները մատնանշում են միևնույն արդյունքը, դատավորը ստիպված կլինի դեպքերի մեծամասնության դեպքում ընտրել հենց այդ տարբերակը: Դա կրկին չի նշանակում, որ նա իրավունք չունի այդ իրավիճակում գնալ իր ճանապարհով: Բայց դրա համար կպահանջվի, որ պոզիտիվ իրավունքի միջոցով միանշանակորեն վերագրվող արդյունքը հանգեցնի աղաղակող անարդարության<sup>34</sup>: Լլևելլինը դատական հայեցողության ազատությունը համարում էր սահմանափակ, բայց կարծում էր, որ այդ սահմանափակության իրական աստիճանը պետք է որոշվի էմպիրիկ հետազոտություններով:

10. Չնայած Լլևելլինի կարծիքով իրավական լիակատար որոշակիության հնարավորության նկատմամբ հավատը հավատ է պատրանքի հանդեպ<sup>35</sup>, ասվածը չի նշանակում, որ Լլևելլինը

պոզիտիվ նորմերն ու դրանց հետևելը կարևոր չէր համարում: Հակառակը, նա չէր կիսում այնպիսի ռեալիստների ծայրահեղական հայացքները, ինչպիսին էր վաղ շրջանի Ֆրենկը. նրանք ծաղրում էին իրավունքի որոշակիության նկատմամբ ձգտումը և իրավունքի կայունության մեջ չէին տեսնում գրեթե ոչ մի արժեք<sup>36</sup>: Այս հարցում Լլևելլինի դիրքորոշումն ավելի շատ մոտ էր Փաունդի դիրքորոշմանը: Նա հավատում էր իրավունքի դինամիզմի ու ճկունության, ինչպես նաև կայունության ու որոշակիության կարևորությանը: Փաունդի նման Լլևելլինը չէր ընդունում իրավունքի բացարձակ կանխատեսելիության, որոշակիության ու կայունության անհնարինությունն ու անցանկալիությունը, ինչպես նաև կարգուկանոնի որոշակի աստիճանի անհրաժեշտությունը<sup>37</sup>: Ինչպես նա գրում էր, իրավունքում չկա և չի կարող լինել 100 տոկոսանոց իրավական որոշակիություն: Դրա փոխարեն անհրաժեշտ է իրավական որոշակիության խելամիտ աստիճան, որը տարբեր է իրավունքի տարբեր ոլորտների համատեքստում<sup>38</sup>:

11. Հետագայում նա որոշ չափով զարգացրեց այդ թեման: Իր հայտնի «Ընդհանուր իրավունքի ավանդույթ» գրքում, որը գրվել էր նրա գիտական ճանապարհի մայրամուտին, նա նշում էր, որ իրավունքի որոշակիությունն ու կանխատեսելիությունը որպես կարևոր, բայց ոչ բացարձակ արժեքներ իրականում ապահովվում են մի ամբողջ խումբ կայունացնող գործոնների օգնությամբ, որոնք նվազեցնում են կամայական հայեցողության դերը: Դա և՛ (1) դատավորների հատուկ պատրաստությունն է, և՛ (2) իրավական որոշակի դոկտրինայի արմատացած լինելը, և՛ (3) դոկտրինաների մշակման՝ իրավաբանների շրջանում ընդունված մեթոդները, և՛ (4) արդարության հասնելու անհրաժեշտության զգացումը, և՛ (5) դեկլարատիվ տեսության փոքր-ինչ հնացած, բայց ենթագիտակցական մակարդակում գործող ֆիկցիան և որոշումը որպես միակ ճշմարիտը մատուցելու ավանդույթը, և՛ (6) որոշման հրապարակային մոտիվացման անհրաժեշտությունը, և՛ (7) սահմանափակումները, որոնք դրվում են դատավարության մրցողականությամբ և կողմերի առաջարկած միայն երկու երկրնորանքների միջև ընտրության անհրաժեշտությամբ, և՛ (8) դատավարության կոլեգիալությունը, և՛ (9) դատավորների մեծ մասի անձեռնմխելիությունը, անկախությունն ու ազնվությունը և մի շարք այլ գործոններ<sup>39</sup>: Դրանցից յուրաքանչյուրն առանձին քիչ բան է նշանակում, բայց բոլորը միասին օգնում են փոխհատուցել այն ներուժն անորոշակիությունը, որն անխուսափելիորեն բխում է այն փաստից, որ ոչ

օրենքի նորմերը, ոչ էլ նախադեպերը չեն հանդիսանում բացարձակ պարտադիր և թույլ են տալիս տարբեր մեկնաբանություններ: Ուստի, դատական հայեցողության ազատությունը առկա է, բայց ունի սահմանափակ բնույթ:

12. Ընդ որում, ինչպես գրում էր Լլևելլինը, XX դարի մեկ երրորդի շատ դատավորներ մտածում են որպես մեծ ոճի դատավորներ՝ փորձելով գտնել բովանդակային արդարություն, բայց թղթի վրա իրենց որոշումները փաստարկում են որպես Ֆորմալ ոճի դատավորներ և զուտ մեխանիկորեն կիրառում պոզիտիվ նորմերը: Որոշումների իրական դրդապատճառների ու դատական հայեցողության իրական դերի թաքցնելն ու որոշումը որպես պոզիտիվ իրավունքից կամ առկա դոկտրինից բացառապես ֆորմալ լոգիկայով հիմնավորված դեդուկցիաներ կայացնելու փորձը Լլևելլինը համարում էր կեղծավորություն<sup>40</sup>: Նա գրում էր, որ դատավորները հաճախ որոշման են հանգում սկզբում և հետո միայն դրա լեգիտիմ հիմնավորման համար ընտրում հարմար ֆորմալ փաստարկներ<sup>41</sup>: Նրա իդեալը մեծ ոճն էր, որին դատավորները պետք է հետևեն ինչպես բուն իրավական համակարգի ձևավորման ընթացքում, այնպես էլ նրա հասունության շրջանում, երբ անհրաժեշտ են միայն լոկալ շտկումներ ու նորարարություններ<sup>42</sup>:

13. Ասվածը չի նշանակում, որ այնպիսի ռեալիստների համար, ինչպիսին է Լլևելլինը, նշանակություն չունեն, թե ինչպիսին իրավունքը պետք է լինի: Յեռիհնգի ու Փաունդի նման նա իրավունքը տեսնում էր բացառապես որպես սոցիալական կոնկրետ նպատակների հասնելու գործիք: Նա ուղղակիորեն խոստովանում էր, որ հենց Փաունդին է ամերիկյան իրավունքը պարտական իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչի, ոչ ավտոնոմության ու գործիքայնության հստակ ու առողջ գիտակցման համար: Այնուամենայնիվ Լլևելլինը համարում էր, որ իրավական ռեալիզմի շարժման գլխավոր խնդիրը ոչ թե այդ նպատակների որոնումն է (նորմատիվային վերլուծության ժամանակ), այլ իրավունքի գործման իրողությունների բացահայտումը (դեսկրիպտիվ վերլուծության ժամանակ): Փաունդի դժգոհությունը ռեալիստների կողմից իրավունքի նորմատիվային, իդեալական տարրի տնտեսման նկատմամբ Լլևելլինը հերքում էր: Հիշեցնենք, որ Փաունդը բավարար չէր համարում միայն իրավական իրողությունների ուսումնասիրությունը և պնդում էր իրավունքի քաղաքականության հետազոտությունը՝ ռեալիստների մոտ չտեսնելով որևէ դոկտրինա կամ ընդհանրապես հետաքրքրություն իրավական գիտության

այդ կողմի հանդեպ<sup>43</sup> : Իսկ Լլևելլինը համարում էր, որ ինքն ու իր գործընկերները լիովին ընդունում են իրավունքի քաղաքականության ու իրավական բարեփոխման նպատակների որոշման կարևորությունը: Միայն թե խնդիրն այն է, որ իրավական ռեալիզմը չի հավակնել իրավական սպառնիչ հարացույցի ստեղծման՝ իր առջև դնելով ավելի համեստ նպատակ՝ բացել իրավաբանների աչքերը իրավական համակարգի գործարկման իրողությունների վրա: Նա պնդում էր գործողության մեջ իրավունքի և այն բանի վերլուծության ժամանակավոր բաժանման վրա, թե ինչպիսին այդ իրավունքը պետք է լինի (իրավունքի քաղաքականություն): Կարևոր է ընդգծել, որ նրա կարծիքով այդ տարանջատումը ժամանակավոր է, քանի որ իրավունքի վերլուծությունը առանց նրա նպատակների, իհարկե, անհնարին է: Բայց նախքան առաջարկելը ինչ-որ բան փոխել իրավունքի մեջ, հարկ է իմանալ ճշմարտությունը, թե իրավունքն իրականում ինչպես է գործում ձերբազատվել միֆերից, ֆիկցիաներից ու կեղծավորությունից: Ուստի, իրավական ռեալիզմի առաջին նպատակը դատական իրավաստեղծման իրողությունների գիտակցումն է<sup>44</sup> : Գիտնականները կարող են անցնել իրավունքի քաղաքականության վերլուծության հարցերին միայն այն բանի հստակ հասկացության ձևավորումից հետո, թե ինչպես է իրավունքը գործում:

14. Համապատասխանաբար, Լլևելլինն չի կա-

րելի մեղադրել այն բանի համար, որ անտեսել է իրավունքի նպատակները: Ինչպես նա կարծում էր, վեճերի քննման իրական գործընթացի հիմքում ընկած են իրավունքի քաղաքականության պատկերացումները: Այս գործոններն առաջնորդում են դատավորին այս կամ այն նախադեպը որպես որոշման հիմք ընդունելիս, կարևոր դեր են խաղում օրենքների մեկնաբանման այս կամ այն տարբերակի ընտրության ժամանակ և, ընդհանուր առմամբ, ունեն որոշիչ նշանակություն<sup>45</sup> : Իր համեմատաբար ավելի ուշ շրջանի հոդվածներից մեկում նա գղջում էր, որ դատարանների գործունեության դեսկրիպտիվ վերլուծության ոլորտում որոշակի շեղումը, մասնավորապես իր կարգախոսը, որ իրավունքն այն է, ինչ անում են դատավորները և ոչ ավելին, կարող էին տպավորություն ստեղծել, որ վեճերի քննման ժամանակ իրավունքի վերջնական նպատակների մասին հարցը դատարանների համար այնքան էլ կարևոր չէ<sup>46</sup> : Ուղղակի իրավական ռեալիզմի հետազոտական ծրագրի կենտրոն Լլևելլինը առավել կարևոր էր համարում դնել իրավունքի մյուս ասպեկտը: Ընդունելով Փաուլոնի «սոցիոլոգիական իրավագիտության» գործիքային հարացույցը՝ Լլևելլինն, ըստ էության տեղափոխել էր շեղտադրումը իրավաստեղծման այն ասպեկտի վրա, որը Փաուլոնը թողել էր չմշակված<sup>47</sup> :

<sup>1</sup> Տե՛ս Ղամբարյան Արթուր, Գատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները:

<sup>2</sup> Հրատարակված է մեկ տարի անց՝ oliphant H. A Return to Stare Decisis // 14 American Bar Assosication Journal. 1928.P.71 ff.

<sup>3</sup> Radin M. The Theory of Judicial Decision: or How Judges Think // 11 American Bar Assosication Journal. 1928.P.357 ff.

<sup>4</sup> Hutcheson J.C.Jr. The Judgment intuitive: the Function of the “Hutch” in Judicial Decision // 14 Cornel Low Quarterli. 1928-1929.P.274ff.

<sup>5</sup> Cook W. W. Scientific Method and the Law// 13 American Bar Assosication Journal. 1927. P. 303 ff.

<sup>6</sup> Moore U., Callahan C. C. Law and Learning Theory: A Study in Legal Control // 53 Yale Law Journal 1943. P. 1 ff.

<sup>7</sup> Rodell F. Goodbye to Law Reviews // 23 Virginia Law Review. 1936. P. 34 ff.

<sup>8</sup> Arnold T. W. Institute Priests and Yale Observers - A Reply to Dean Goodrich // 84 University of Pennsylvania Law Review. 1936. P. 811 ff

<sup>9</sup> Ռեալիստները համարում էին, որ իրենց աշխատանքները ոչ թե նոր դպրոց, այլ գիտական շարժում են ներկայացնում՝ Duxbury N. Patterns of American Jurisprudence 1997 P. 68-69:

<sup>10</sup> Pound R. The ideal Element in Law. 2002.P.VII.

<sup>11</sup> Llewellyn K.N. A Realistic Jurisprudence-the Next Stop //30 Columbia Law Review.1930.P. 431 ff.

<sup>12</sup> Frank J. Law and the Modern Mind.1985.

<sup>13</sup> Pound R The Call for a Realist Jurisprudence // 44 Harevard Review 1930-1931 P 697 ff

<sup>14</sup> Llewellyn K. N. Some Realism About Realism - Responding to Dean Pound // 44 Harvard Law Review. 1930-1931. P 1222 ff. Գիտական այս բանավեճի անձնական կողմի մասին ավելի մանրամասն տես Hull N. E. H. Roscoe Pound and Karl Llewellyn: Searching for an American Jurisprudence. 1997 P. 181-191

<sup>15</sup> Herget J., Wallace S. The German Free Law Movement as the Source of American Legal Realism // 73 Virginia Law Review. 1987. P. 434.

<sup>16</sup> Llewellyn K. N. The Bramble Bush On Our Law and Its Study 1996. P. 3.



<sup>17</sup> Green M. S. Legal Realism as Theory of Law // 46 William and Mary Law Review 2005. P. 1928.

<sup>18</sup> Llewellyn K. N. A Realistic Jurisprudence-the Next Step // 30 Columbia Law Review .1930.P.448 ff.

<sup>19</sup> Llewellyn K. N. The Bramble Bush On Our Law and Its Study 1996. P.X.

<sup>20</sup> Llewellyn K. N. The Bramble Bush. On Our Law and Its Study 1996 P. 2.

<sup>21</sup> Տե՛ս Գամբարյան Արթուր, Գատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, էջ 5:

<sup>22</sup> Տե՛ս Գամբարյան Արթուր, Գատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, էջ 9:

<sup>23</sup> Տե՛ս Գամբարյան Արթուր, Գատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, էջ 180:

<sup>24</sup> Տե՛ս Գամբարյան Արթուր, Գատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, էջ 72-75:

<sup>25</sup> Llewellyn K. N. The Bramble Bush. On Our Law and Its Study. 1996. P. 88-89.

<sup>26</sup> Llewellyn K. N. Remarks on the Theory of Appellate Decision and the Rules or Canons About How Statutes Are to Be Interpreted // 3 Vanderbilt Law Review. 1949-1950. P. 396.

<sup>27</sup> Տե՛ս Գամբարյան Արթուր, Գատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, էջ 403:

<sup>28</sup> Այս և մյուս օրինակները կարդացե՛ք Llewellyn K. N. Remarks on the Theory of Appellate Decision and the Rules or Canons About How Statutes Are to Be Interpreted // 3 Vanderbilt Law Review. 1949-1950 P. 401-406:

<sup>29</sup> Llewellyn K. N. A Realistic Jurisprudence -the Next Step // 30 Columbia Law Review 1930 P 453 ff.

<sup>30</sup> Llewellyn K. N. A Realistic Jurisprudence - the Next Step // 30 Columbia Law Review 1930. P 434 ff.

<sup>31</sup> Llewellyn K. N. A Realistic Jurisprudence ? the Next Step // 30 Columbia Law Review 1930 P. 442 ff.

<sup>32</sup> Տե՛ս Գամբարյան Արթուր, Գատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, էջ 443:

<sup>33</sup> Տե՛ս Գամբարյան Արթուր, Գատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, էջ 434-435:

<sup>34</sup> Llewellyn K. N. The Bramble Bush. On Our Law and Its Study 1996. P. 81.

<sup>35</sup> Llewellyn K. N. Some Realism About Realism - Responding to Dean Pound // 44 Harvard Law Review 1930-1931 P. 1242 ff.

<sup>36</sup> Fuller L. L. American Legal Realism//82 University of Pennsylvania Law Review 1933 1934 P 431.

<sup>37</sup> Llewellyn K. N. The Bramble Bush On Our Law and Its Study 1996. P. 128.

<sup>38</sup> Llewellyn K. N. On Reading and Using the New Jurisprudence // 26 American Bar Association Journal 1940. P. 418.

<sup>39</sup> Llewellyn K. N. The Common Law Tradition - Deciding Appeals. 1960. P. 19-51.

<sup>40</sup> Llewellyn K. N. The Bramble Bush. On Our Law and its Study 1996. P. 190.

<sup>41</sup> Llewellyn K. N. Cases and Materials on the Law of Sales 1930 P X (մեջբերումը? Hull N.E.H. Roscoe Pound and Karl Llewellyn: Searching for an American Jurisprudence. 1997. P. 178).

<sup>42</sup> Llewellyn K. N. The Common Law Tradition - Deciding Appeals 1960. P. 37.

<sup>43</sup> Pound R. The Call for a Realist Jurisprudence//44 Harvard Law Review. 1930-1931. P. 699-700.

<sup>44</sup> Llewellyn K. N. Some Realism About Realism - Responding to Dean Pound // 44 Harvard Law Review 1930-1931. P. 1236-1237.

<sup>45</sup> Տե՛ս Գամբարյան Արթուր, Գատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, էջ 1254:

<sup>46</sup> Llewellyn K. N. On Reading and Using the New Jurisprudence // 26 American Bar Association Journal 1940. P. 420.

<sup>47</sup> Hull N. E. H. Roscoe Pound and Karl Llewellyn: Searching for an American Jurisprudence 1997 P 143.

**РЕЗЮМЕ**

**Формирование и развитие правового реализма в США**

В статье всесторонне излагаются основные черты концепции правового реализма, как одного из современных подходов правопонимания в западной теории права и правовой практики, а также раскрываются сущность и содержание данной концепции правопонимания.

**SUMMARY**

**Formulation and development of the legal realism in USA**

In this article the main characteristics of the conception of legal realism are comprehensively stated as one of the modern approaches to legal understanding in the western theory of law and legal practice, and the essence and content of given conception are revealed.